

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՑ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25 դեկտեմբերի 2012 թ.

N 562-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՑ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ
ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Դեկապարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Երևանի քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված
ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

Երևանի քաղաքապետ

S. Մարգարյան

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
2012 թվականի դեկտեմբերի 25-ի
N 562-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված
ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման**

1. Սույն կարգով կարգավորվում են Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ
տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգով օգտագործվող հասկացությունները ունեն Հայաստանի Հանրապետության
կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածով սահմանված
հասկացությունների իմաստը:

3. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը (միասին այսուհետ՝ ավտոտրանսպորտային միջոց)
հատուկ տարածք տեղափոխելուց անմիջապես հետո հատուկ տարածքի համար պատասխանատու անձը
կատարում է համապատասխան գրառում հատուկ մատյանում, որը հաստատվում է ավտոկայանատեղի
կազմակերպչի կամ վերջինիս լիազորված անձի կողմից:

4. Հատուկ տարածք ավտոտրանսպորտային միջոցի մուտք գործելու և հատուկ տարածքից
ավտոտրանսպորտային միջոցը բաց թողնելու ժամանակ մատյանում նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) հատուկ տարածք տեղափոխված (հատուկ տարածքից բաց թողնված) ավտոտրանսպորտային միջոցի
մակնիշը, հաշվառման համարանիշը,

2) հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցը տեղավորելու (հատուկ տարածքից
ավտոտրանսպորտային միջոցը բաց թողնելու) ժամանակը (ամիս, ամսաթիվ, ժամ, րոպե),

3) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածքում պահպանելու ժամկետը (օր, ժամ),

4) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու արձանագրության համարը և կազմելու
ժամանակը,

5) հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի պահպանման համար հաշվարկված գանձման
ենթակա տուրքի չափը,

6) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղավորելու ծախսերի փոխհատուցման մասին
տվյալներ. ինիսառողության անունու, առաջարկության առաջարկության անունու, ստորագրության անունու.

- 7) հատուկ տարածքի համար պատասխանատու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը,
- 8) հատուկ տարածքից բաց թողնվող ավտոտրանսպորտային միջոցի անվնաս լինելու վերաբերյալ դրա սեփականատիրոջ, նրա լիազորած անձի կամ այն անձի, ում կցված է այն, համաձայնությունը կամ անհամաձայնությունը, նրա անուն, ազգանուն, ստորագրությունը:
5. Հատուկ տարածքում երեք տարի ժամկետով պահպանվում են հետևյալ փաստաթղթերը.
- 1) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք մուտք գործելու և հատուկ տարածքից բաց թողնելու հաշվառման մատյանը,
- 2) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրությունը,
- 3) հատուկ տարածք տեղափոխման համար հաշվարկված վճարի, իշպես նաև հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի գունվելու տևողության և, ըստ դրա պահպանման համար գանձման ենթակա և փաստացի գանձված գումարի չափի վերաբերյալ կտրոնները (դրանց առկայության դեպքում):
6. Սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետը լրանալուց հետո կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերն ենթակա են հանձնման Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին՝ արխիվացման նպատակով: